ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2017 թվականի N 16_Ա

«ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի «ա» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետը՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հաստատել «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

Սահակ Հակոբյան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական (հանձնաժողովի նախագահ)
Նունե Գևորգյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Միլենա Գասպարյան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական
Սուսաննա Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Անահիտ Հովհաննիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ (քարտուղար)
Աննա Ոսկանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
Արարատ Վարդանյան	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2017թ. Հունվարի 30
ք. Կապան